Հավելված 1
«Արդշինբանկ» ՓԲԸ վարչության նախագահի
2025թ. հունիսի 05-ի թիվ 42-Լ հրամանի

Ֆինանսական գործառնությունների պայմաններ

1. Պայմանների կարգավորման առարկան

1.1. Սույն Պայմանները սահմանում են Բանկի կողմից Պայմանների 1.2. ենթակետում սահմանված գործարքների/գործառնությունների իրականացման պայմանները և կանոնակարգում են դրանց հետ կապված Բանկի և Գործարքի մյուս կողմի (այսուհետ՝ Գործընկեր, միասին՝ Կողմեր) միջև ծագած իրավահարաբերությունները:
1.2. Սույն Պայմանները տարածվում են Կողմերի միջև կնքվող և կատարվող հետևյալ գործարքների/գործառնությունների վրա.
1.2.1. Արտարժույթի առք ու վաճառք,
1.2.2. Արտարժույթի կանխկացում և(կամ) ապականխիկացում,
1.2.3. Արժութային սվոփ գործարքներ,
1.2.4. Արժութային ֆորվարդ գործարքներ,
1.2.5. Ավանդային գործարքներ,
1.2.6. Արժեթղթերի գրավադրմամբ վարկային գործարքներ,
1.2.7. Առանց ապահովվածության վարկային գործարքներ,
1.2.8. Ռեպո/հակադարձ ռեպո,
1.2.9. Արժեթղթերի առք ու վաճառք,
1.2.10. Հաշվանց:
1.3. Պայմանները, Պայմաններով սահմանված հավելվածները և փաստաթղթերը, այդ թվում՝ Պայմանների հիման վրա կնքված գործարքների/գործառնությունների իրականացման նպատակով Կողմերի միջև փոխանակված փաստաթղթերը, միասին կազմում են պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):
1.4. Եթե օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի և Գործընկերոջ լրացուցիչ գրավոր համաձայնությամբ, այդ թվում՝ համաձայնագրով, սահմանված են այլ դրույթներ, քան Պայմաններով, ապա այդ դրույթները ճանաչվում են գերակայող:

2. Հիմնական հասկացություններ

«Spot գործարք»՝ փոխարկային գործարք, որի դեպքում հաշվարկներն իրականացվում են գործարքի կնքման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը,

«TOD գործարք»՝ փոխարկային գործարք, որի դեպքում հաշվարկներն իրականացվում են գործարքի կնքման օրը,

«TOM գործարք»՝ փոխարկային գործարք, որի դեպքում հաշվարկներն իրականացվում են գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրը,

«Աշխատանքային օր»՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնի կամ հիշատակի ոչ աշխատանքային օրերից, ՀՀ կառավարության կողմից հայտարարված ոչ աշխատանքային օրերից, ինչպես նաև շաբաթ և կիրակի (բացառությամբ՝ աշխատանքային հայտարարված շաբաթ և կիրակի օրերի) օրերից բացի ցանկացած օրացուցային օր,

«Առանց ապահովվածության վարկային գործարք»՝ այն Գործարքը, որով Գործարքի կատարման օրը Վարկատուն Վարկառուին փոխառությամբ տրամադրում է դրամական միջոցներ, իսկ Վարկառուն պարտավորվում է Գործարքի մարման օրը Վարկատուին վերադարձնել դրամական միջոցները և վճարել հաշվեգրված տոկոսագումարը,

«Ավանդային գործարք»՝ այն Գործարքը, որով Ավանդատուն Գործարքի կատարման օրը դրամական միջոցներ է ներդնում Ավանդառուի մոտ նախապես պայմանավորված պայմաններով, իսկ Ավանդառուն պարտավորվում է Գործարքի մարման օրը Ավանդատուին վերադարձնել դրամական միջոցները և վճարել հաշվեգրված տոկոսագումարը,

«Ավանդատու»՝ Գործարքի կատարման օրը համաձայն Ավանդային գործարքի պայմանների դրամական միջոցներ տրամադրող կողմ,

«Արժեթուղթ»՝ ՀՀ Արժեթղթերի շուկայի մասին օրենքով սահմանված արժեթղթեր,

«Արժեթղթի առքի ու վաճառքի գործարք»՝ Գործարք, որով մի Կողմը Արժեթղթերի առքի (վաճառքի) հայտում նշված գնով և պայմաններով Գնորդի սեփականությանն է հանձնում Արժեթղթեր, իսկ Գնորդը սեփականության իրավունքով ձեռք է բերում Արժեթղթերը և դրանց դիմաց վճարում նախապես համաձայնեցված գինը.

«Արժեթղթերի գրավադրմամբ վարկային գործարք»՝ Գործարք, որով Գործարքի կատարման օրը Գրավատու-Վարկառուն Գրավային գործարքի համաձայն Գրավառու-Վարկատուի մոտ գրավադրում է Արժեթղթեր, իսկ Գրավառու-Վարկատուն Վարկային գործարքի համաձայն Գրավատու-Վարկառուին փոխառությամբ տրամադրում է դրամական միջոցներ. Գործարքի մարման օրը Գրավատու-Վարկառուն պարտավորվում է Գրավառու-Վարկատուին վերադարձնել դրամական միջոցները և վճարել հաշվեգրված տոկոսագումարը, ինչից հետո Գրավառու-Վարկատուն պարտավորվում է գրավից ազատել Արժեթղթերը,

«Արտարժույթ»՝ օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ հանվող, բայց փոխանակման ենթակա օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամներն ու մետաղադրամները, ինչպես նաև բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով և (կամ) միջազգային դրամական միավորներով արտահայտված միջոցները,

«Արտարժույթի ապականխիկացում»՝ գործարք, որով մի Կողմից կանխիկ Արտարժույթի դիմաց անկանխիկ Արտարժույթ է տրամադրվում ապականխիկացնող մյուս Կողմին,

«Արտարժույթի կանխիկացում»՝ գործարք, որով մի Կողմից անկանխիկ Արտարժույթի դիմաց կանխիկ Արտարժույթ է տրամադրվում կանխիկացնող մյուս Կողմին,

«Բանկ»՝ Արդշինբանկ ՓԲԸ,

«Գնորդ»՝ Գործարքի կատարման օրը միջոցները սեփականության իրավունքով ձեռք բերող կողմը.

«Գործարք կնքելու առաջարկ» (Առաջարկ)՝ մի Կողմի կողմից սույն Պայմաններով նախատեսված կարգով մյուս Կողմին ուղարկված՝ գործարք կնքելու առաջարկ,

«Գործարք կնքելու/երկարաձգելու/վաղաժամ մարելու առաջարկի հաստատում» (Հաստատում)՝ Գործարք կնքելու/երկարաձգելու/վաղաժամ մարելու առաջարկը ստացող Կողմի կողմից սույն Պայմաններով նախատեսված կարգով Գործարք կնքելու/երկարաձգելու/վաղաժամ առաջարկը հաստատելու մասին ծանուցում,

«Գործարք կնքելու առաջարկի մերժում» (Մերժում)՝ Գործարք կնքելու առաջարկը ստացող Կողմի կողմից սույն Պայմաններով նախատեսված կարգով Գործարք կնքելու առաջարկը մերժելու մասին ծանուցում,

«Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ»՝ մի Կողմի կողմից սույն Պայմաններով նախատեսված կարգով մյուս Կողմին ուղարկված՝ գործարքը վաղաժամ մարելու առաջարկ,

«Գործարքի երկարաձգման առաջարկ»՝ մի Կողմի կողմից սույն Պայմաններով նախատեսված կարգով մյուս Կողմին ուղարկված՝ գործարքի երկարաձգման առաջարկ,

«Գործարքի գին» կամ «Գործարքի գումար»՝ Գործարքի արդյունքում փոխանցման ենթակա գումարը, որը համաձայնեցվում է Կողմերի միջև բանակցությունների արդյունքում.

«Գործարքի ծավալ»՝ Գործարքի հիմքում ընկած Արտարժույթի միավորների գինը կամ Արժեթղթերի քանակը/ծավալը/անվանական արժեքը,

«Գործարքի կատարման օր»՝ այն օրն է, երբ Կողմերը կատարում են Գործարքի պայմաններով ստանձնած պարտավորությունները,

«Գործարքի կնքման օր»՝ այն օրն է, երբ Կողմերից մեկը հաստատում է Գործարքի կնքման՝ մյուս Կողմի կողմից ներկայացված հայտը/առաջարկը,

«Գործարքի հաստատում» կամ «Հաստատում»՝ Հայտը ստացող Կողմի ծանուցումը Հայտն ուղարկողին՝ վերջինիս կողմից ուղարկված Գործարք կնքելու առաջարկը բավարարելու վերաբերյալ,

«Գործարքի մարման օր»՝ այն օրն է, երբ Կողմերի միջև Գործարքից ծագած փոխադարձ պարտավորությունները դադարում են՝ Կողմերը կատարում են Գործարքի պայմաններով ստանձնած պարտավորությունները,

«Գրավային գործարք»՝ Գործարք, որով Գործարքի կատարման օրը Գրավատուն, ի ապահովում Գրավառուի նկատմամբ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման, Գրավառուի մոտ գրավադրում է միջոցներ, իսկ Գործարքի մարման օրը Գրավառուն պարտավորվում է գրավից ազատել այդ միջոցները,

«Գրավառու»՝ Գործարքի կատարման օրը համաձայն Գրավային գործարքի պայմանների միջոցները գրավ ընդունող կողմ,

«Գրավատու»՝ Գործարքի կատարման օրը համաձայն Գրավային գործարքի պայմանների միջոցները գրավադրող կողմ,

«Դիլերներ»՝ Կողմերի աշխատակիցներ, որոնք սույն Պայմանների հիման վրա լիազորված են համապատասխան Կողմի անունից վարել բանակցություններ և կնքել գործարքներ,

«Դրամական շուկայում գործարք»՝ Ավանդային, Արժեթղթերի գրավադրմամբ վարկային, Առանց ապահովվածության վարկային գործարքներ,

«Ենթապահառու»՝ Արժեթղթերի պահառուական ծառայություններ մատուցող ֆինանսական կազմակերպություն,

«Կանխիկացնող»՝ կանխիկ ստացող կողմ,

«Կատարման (Հաշվեգրման) ամսաթիվ»՝ Գործարքով վճարումը ստացող Կողմի թղթակցային հաշվին միջոցների տրամադրման օր,

«Հաշվանց»՝ կնքված մեկ կամ մեկից ավելի գործարքներով ծագած իրավունքների և պարտավորությունների զուտացում,

«Հաշվանցման հայտ»՝ մի Կողմից մյուս Կողմին ներկայացված հաշվանցման գործարք կնքելու առաջարկ,

«Հաշվանցման հայտի հաստատում»՝ Հաշվանցման հայտը ստացողի ծանուցումը հայտն ուղարկողին՝ վերջինիս կողմից ուղարկված առաջարկը բավարարելու վերաբերյալ,

«Հաշվանցման հայտի մերժում»՝ Հաշվանցման հայտը ստացողի ծանուցումը հայտն ուղարկողին՝ վերջինիս կողմից ուղարկված առաջարկը մերժելու վերաբերյալ,

«Հեյրքաթ»՝ Արժեթղթի գնահատման ժամանակ շուկայական արժեքից նվազեցվող մեծություն,

«Պահառու»՝ Արժեթղթերի պահառության գործունեությունն իրականացնող իրավասու մարմին,

«Պայմաններ»՝ Արտարժույթային գործառնությունների, դրամական շուկայում գործառնությունների, ռեպո/հակադարձ ռեպո և հաշվանցի պայմաններ,

«Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարք»՝ գործարք, որով մի Կողմը Գործարքի կատարման օրը վաճառում է սույն Պայմաններով նախատեսված Արժեթղթերը՝ Գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ մյուս Կողմը սեփականության իրավունքով ձեռք է բերում Արժեթղթերը՝ դրանք Գործարքի մարման օրը վերավաճառելու պարտավորությամբ,

«Ռեպո գործարքի պայմանների փոփոխման հայտ»՝ մի Կողմից մյուս Կողմին ներկայացված՝ կնքված Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարքի պայմանները (Գործարքի կատարման օրը, Գործարքի մարման օրը, տոկոսադրույքը, Կողմերի կատարման և մարման օրվա դեպո և դրամական հաշվի համարները) փոփոխելու առաջարկ,

«Ռեպո գործարքի պայմանների փոփոխման հայտի հաստատում»՝ Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարքի պայմանների փոփոխման հայտը ստացողի ծանուցումը հայտն ուղարկողին՝ վերջինիս կողմից ուղարկված առաջարկը բավարարելու վերաբերյալ,

«Ռեպո գործարքի պայմանների փոփոխման հայտի մերժում»՝ Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարքի պայմանների փոփոխման հայտը ստացողի ծանուցումը հայտն ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված առաջարկը մերժելու վերաբերյալ,

«Սվոփ գործարք»՝

- **Արժութային սվոփը** համաձայնություն է, որը նախատեսում է Առաջարկով և Հաստատումով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները Առաջարկով և Հաստատումով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք), ինչպես նաև նախապես սահմանված տոկոսագումարներ փոխանակելու պայմանով:
- **Փոխարժեքային սվոփը** արժութային սվոփի տեսակ է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները Առաջարկով և Հաստատումով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք) պայմանով:
- **Տոկոսադրույքային սվոփը** համաձայնություն է, որը նախատեսում է տոկոսային վճարումների տեսքով դրամական հոսքերի փոխանակում: Տոկոսադրույքային սվոփի պարագայում հիմքում ընկած դրամական միջոցները չեն փոխանակվում, այլ փոխանակվում են միայն այդ դրամական միջոցների նկատմամբ հաշվարկված տոկոսային վճարումները: Սվոփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները լողացող տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքներով հաշվարկված տոկոսագումարները:

«Վարկառու»՝ Գործարքի կատարման օրը համաձայն Վարկային գործարքի պայմանների դրամական միջոցներ ներգրավող կողմ,

«Վարկատու»՝ Գործարքի կատարման օրը համաձայն Վարկային գործարքի պայմանների դրամական միջոցներ տրամադրող կողմ,

«ԹՀՏ»՝ թղթակցային հաշիվների տվյալներ,

«Վճարային վավերապայմաններ կամ Կողմերի վավերապայմաններ»՝ Կողմերի բանկային հաշիվների և հաղորդակցության միջոցների մասին տեղեկություն, որն անհրաժեշտ է Գործարքով նախատեսված վճարումների իրականացման համար,

«Փոխարկային գործարք»՝ Կողմերի միջև կնքվող՝ Արտարժույթի առք/վաճառքի դիմաց ՀՀ դրամի կամ այլ Արտարժույթի վաճառք/առքի գործարք:

3. Ընդհանուր դրույթներ

3.1 Սույն Պայմաններին միանալու համար Գործընկերը Բանկին է ներկայացնում.

- Համաձայնագիր՝ համաձայն Հավելված 2-ի,
- Պայմանների 3.2 կետով սահմանված փաստաթղթերը,

3.2 Պայմանների 1.2 կետում նշված Գործարքներն իրականացնելու համար Կողմերը Համաձայնագիրը ստորագրելիս միմյանց տրամադրում են հետևյալ փաստաթղթերը (այնքանով, որքանով դրանք կիրառելի են տրամադրող կողմի համար)՝

- Հիմնադիր փաստաթղթերի (կանոնադրություն, հիմնադրման պայմանագիր՝ առկայության դեպքում), գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված Կողմերից յուրաքանչյուրի կողմից,
- Բանկային գործառնությունների իրականացման լիցենզիաների պատճենները՝ հաստատված Կողմերից յուրաքանչյուրի կողմից,
- Գործարքները ստորագրելու լիազորություններ ունեցող անձանց պաշտոնները, անունները, ազգանունները, նրանց լիազորությունները հաստատող իրավական փաստաթղթերը, ստորագրությունների և կնիքի դրոշմի նմուշների քարտը՝ հաստատված Կողմերից յուրաքանչյուրի կողմից,
- Գործադիր մարմնի գրանցման ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը՝ հաստատված Կողմերից յուրաքանչյուրի կողմից:
- Կողմերի վճարային վավերապայմանները՝ Հավելված 3-ով սահմանված ձևով,
- Այլ անհրաժեշտ փաստաթղթեր, եթե թվարկվածը կիրառելի չէ կողմերից մեկի համար կամ բավարար չէ:

3.3 Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս Կողմի պահաջի դեպքում վերջինիս տրամադրել Պայմաններով սահմանված դրույթների կատարումը ապահովելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

3.4 Կողմերը միմյանց տրամադրում են այլ բանկերում իրենց ունեցած այն ԹՀՏ-ները, որոնք պետք է օգտագործվեն մյուս Կողմի կողմից վճարումների (փոխանցումների) կատարման ընթացքում:

3.5 Կողմերը կարող են միմյանց ներկայացնել մեկ կամ մեկից ավելի ԹՀՏ: Մեկից ավելի ԹՀՏ ներկայացրած լինելու դեպքում համապատասխան գործարքի Առաջարկում արտացոլվում է տվյալ գործարքի համար նախընտրած հաշիվը: Առաջարկում կարող են արտացոլվել մեկից ավելի հաշիվներ՝ այս դեպքում փոխանցումը կարող է կատարվել նշվածներից ցանկացած հաշվով՝ առաջնայնությունը տալով Բանկում բացված հաշիվներին:

3.6 Պայմանների 3.1-3.5 կետերում նշված տեղեկություններում փոփոխություններ առաջանալու դեպքում Կողմերը պարտավորվում են տվյալ փոփոխությունից հետո (փոփոխության գրանցումից հետո) 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել մյուս Կողմին: Հակառակ դեպքում Կողմերի միջև սույն Պայմաններից բխող թղթակցությունները, հաստատումները, գրագրությունները, վճարումները և սույն Պայմաններով սահմանված դրույթների կատարումն ապահովող այլ գործողություններն իրականացվում են Կողմերի կողմից սույն Պայմաններում նշված հասցեներով, տվյալներով և վավերապայմաններով: Փոփոխությունների մասին մյուս Կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող Կողմը:

3.7 Պայմաններով կարգավորվող և Համաձայնագրով սահմանված յուրաքանչյուր գործառնության մասով Կողմերն ընտրում են իրավասու աշխատակիցներ, ովքեր լիազորված են վարել բանակցություններ, կնքել գործարքներ, ինչպես նաև փոխանակվել գործարքի վերաբերյալ տեղեկատվություն էլեկտրոնային համակարգերի միջոցով (Refinitiv, Bloomberg, Swift կամ այլ՝ Համաձայնագրում սահմանված համակարգերով): Իրավասու աշխատակիցների իրավասությունները հաստատվում են լիազորագրերով, որոնք տրամադրվում են սույն Պայմանների Հավելված 4-ով սահմանված ձևի համաձայն: Փոխադարձ համաձայնությամբ կարող են կիրառվել Բանկի կողմից սահմանված ձևից տարբերվող լիազորագրեր:

3.8 Կողմերն ընդունում են, որ Հավելված 3-ում նշված տեստային բանալիները, դիլինգային կոդերը, առանձնացված հասցեները, որոնք Կողմերն ընդունել են էլեկտրոնային (Refinitiv, Bloomberg, CBANet, SWIFT և(կամ) այլ) համակարգում, առանձնահատուկ են յուրաքանչյուր Կողմի համար, ճշգրիտ կերպով մատնանշում են Գործարքում որպես Կողմ հանդիսացող անձին և հանդիսանում են սույն Պայմաններով նախատեսված Գործարքները կնքող անձանց ստորագրություններին հավասարազոր գրառում:

3.9 Կողմերն իրավունք ունեն ձայնագրել Գործարքի կնքման յուրաքանչյուր հեռախոսային խոսակցություն, ընդ որում, այդ ձայնագրությունները, ինչպես նաև էլեկտրոնային համակարգով տրված Հաստատումները կամ վարվող բանակցությունների թղթային կամ էլեկտրոնային տարբերակը (ներառյալ արխիվացումները) Կողմերը ընդունում են որպես ապացույց վիճելի հարցերի ժամանակ՝ յուրաքանչյուր փաստի հայտնաբերման նպատակով, որոնք վերաբերում են Պայմաններով իրականացվող գործառնություններին:

3.10 Կողմերը պարտավորվում են պահպանել Պայմանների շրջանակներում կատարվող Գործարքների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը: Այդպիսի տեղեկատվությունը ամբողջությամբ կամ մասամբ ենթակա չէ հրապարակման: Տվյալ տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց, հրապարակումը կամ այլ կերպ տարածելը կարող է իրականացվել միայն մյուս Կողմի գրավոր համաձայնությամբ: Բացառություն են կազմում նաև այն պատասխանատու անձինք, պետական մարմինները, որոնք լիազորված են ստանալ այդպիսի տեղեկատվություն ՀՀ օրենսդրության շրջանակներում, ինչպես նաև եթե տեղեկատվության հրապարակումն անհրաժեշտ է Կողմերի իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության համար: Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հանրամատչելի տեղեկատվության և այն տեղեկատվության փոխանցման վրա, որը ՀՀ օրենսդրության համաձայն չի կարող պարունակել առևտրային և(կամ) բանկային գաղտնիք և չի հանդիսանում այդպիսին:

3.11 Կողմերն իրավունք չունեն միակողմանի կերպով հրաժարվել Պայմանների հիման վրա տրված Գործարք կնքելու Առաջարկի Հաստատումներից/կնքված Գործարքներից, ինչպես նաև կնքված Գործարքներից բխող պարտավորությունների կատարումից, բացառությամբ Պայմանների 16-րդ բաժնում նշված դեպքերի: Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել կամ Գործարքի կատարման օրվա ընթացքում չի կատարում սույն հոդվածով սահմանված պարտավորությունները, ապա մյուս Կողմն իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը

կամ հրաժարվել այն կատարելուց: Նման դեպքերում կողմերը վերադարձնում են տվյալ Գործարքի գծով ստացված դրամական միջոցները (բացառությամբ տուժանքի գումարների) և Արժեթղթերը:

3.12 Գործարքների կնքման նպատակով Կողմերի իրավասու աշխատակիցները բանակցություններ են վարում և Գործարքի հիմնական պայմանները համաձայնեցնում են էլեկտրոնային համակարգով (Refinitiv, Bloomberg և(կամ) այլ), թղթային տարբերակով կամ հեռախոսով:

3.13 էլեկտրոնային համակարգով Գործարքներ կատարելիս գործարքը համարվում է կնքված Կողմերի իրավասու անձանց կողմից Գործարքի էական պայմանները համաձայնեցնելու և Հաստատումները ստանալու պահից: էլեկտրոնային համակարգով իրավասու անձանց Հաստատումները (այդ թվում դրանց տպագրված թղթային տարբերակները) հանդիսանում են Գործարքի փաստացի կնքման փաստաթուղթ:

3.14 էլեկտրոնային համակարգով Գործարքը կնքելուց հետո Կողմերը պարտավորվում են միմյանց ուղարկել Գործարքի բոլոր հիմնական պայմանները ներառող Հաստատումները, ընդ որում.

- «TOD» գործարքներ կնքելիս – հայկական ժամանակով մինչև Գործարքի կնքման օրվա ժամը 15:30, եթե Գործարքի արժույթներից մեկը հանդիսանում է ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ,
- «TOD» գործարքներ կնքելիս – հայկական ժամանակով մինչև Գործարքի կնքման օրվա ժամը 16:30, եթե Գործարքի արժույթներից ոչ մեկը չի հանդիսանում է ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ,
- Մնացած Գործարքները կնքելիս – հայկական ժամանակով մինչև Գործարքի կնքման օրվա ժամը 17:30, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ:

3.15 Եթե Հաստատման մեջ Գործարքի հիմնական պայմանները չեն համընկնում, Կողմերը պարտավորվում են դրանք հայտնաբերելու պահից նույն օրը հայտնել այդ մասին և միջոցներ ձեռնարկել վերջիններիս շտկման համար՝ ուղարկելով ճշգրտող Հաստատումներ, որոնք պարունակում են կոնկրետ Գործարքի՝ իրավասու անձանց կողմից համաձայնեցված պայմանները: Հակառակ դեպքում, հաշվարկներն իրականացվում են՝ բանակցությունների ընթացքում Կողմերի հաստատած պայմանների և սույն Պայմանների պայմանների համաձայն:

3.16 Հեռախոսով բանակցությունների դեպքում Կողմերի միջև ձեռք է բերվում բանավոր պայմանավորվածություն Գործարքի հիմնական պայմանների վերաբերյալ: Հեռախոսով համաձայնության գալու դեպքում Կողմերը պարտավորվում են Պայմանագրում սահմանված կապի միջոցներով (CBANet համակարգչային ցանց, էլ.փոստ, SWIFT կամ այլն) փոխանակվել Առաջարկ-Հաստատումով:

3.17 Գործարքի Հաստատումները Կողմերը պարտավորվում են ուղարկել՝

- «TOD» գործարքներ կնքելիս – հայկական ժամանակով մինչև Գործարքի կնքման օրվա ժամը 15:30, եթե Գործարքի արժույթներից մեկը հանդիսանում է ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ,
- «TOD» գործարքներ կնքելիս – հայկական ժամանակով մինչև Գործարքի կնքման օրվա ժամը 16:30, եթե Գործարքի արժույթներից ոչ մեկը չի հանդիսանում ՀՀ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ,
- մնացած Գործարքները կնքելիս – հայկական ժամանակով մինչև Գործարքի կնքման օրվա ժամը 18:00, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ:

3.18 SWIFT համակարգի միջոցով առաքվող հաղորդագրությունները/Հաստատումները ներկայացվում են բացառապես հաղորդագրության՝ MT199 կամ MT299, կամ SWIFT համակարգում տվյալ Գործարքի համար նախատեսված փոխադարձ ստուգվող այլ ձևաչափերով: Հաղորդագրության այլ տիպերի օգտագործմամբ ներկայացված Առաջարկը և(կամ) Հաստատումը/Մերժումը իրավական ուժ չունեն:

3.19 Առաջարկված գործարքի պայմանները ընդունելու դեպքում Առաջարկ ստացած կողմը նույն կապի միջոցով մյուս Կողմին է ուղարկում Հաստատումը: Գործարքը համարվում է կնքված Հաստատումը ստանալու պահից:

3.20 Առաջարկում ներկայացված պայմանները չընդունելու դեպքում Առաջարկ ստացած Կողմը՝ Առաջարկ ներկայացրած կողմին ուղարկում է Մերժում:

3.21 Եթե Առաջարկ ստացած Կողմից առաջարկի Հաստատումը չի ստացվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, իսկ նույն օրվա կատարմամբ Գործարքի դեպքում՝ մինչև ժամը 15:00, ապա Գործարքը համարվում է մերժված, եթե այլ բան նախատեսված չէ Հաստատման մեջ:

3.22 Առաքված Առաջարկը և(կամ) Հաստատումը և(կամ) Մերժումը չի կարող հետ կանչվել:

3.23 Կողմերի համաձայնությամբ Գործարքի կնքման թղթային Առաջարկը ստորագրվում է լիազորված պաշտոնատար անձի (անձանց) կողմից: Թղթային եղանակով փաստաթղթերը ներկայացվում են 2 օրինակից, որից մեկը մնում է ստացող Կողմի մոտ, իսկ մյուսը վերադարձվում է ներկայացնող Կողմին:
3.24 Կողմերն ընդունում են, որ Հաստատումները, որոնք Կողմերը փոխանակում են Պայմանների համաձայն, այնքանով, որքանով դրանք համապատասխանում են Գործարքը կնքելիս իրավասու աշխատակիցների բանակցություններին, ունեն նույն իրավական ուժը, ինչ Կողմերի միջև մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով լիազորված անձանց կողմից կնքված Պայմանագիրը: Նշված Հաստատումները, որոնք ձևակերպում են Գործարքը, պետք է պարտադիր կարգով պարունակեն հղում սույն Պայմաններին:
3.25 Եթե Գործարքի մարման օրը ոչ աշխատանքային օր է, սույն Պայմանների շրջանակներում համապատասխան պարտավորությունը կատարվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
3.26 Եթե պարտավորությունը կատարվել է Գործարքի կատարման օրը աշխատանքային օրվա ավարտից հետո և այն անհնար է ձևակերպել Գործարքի կատարման օրվա ընթացքում, ապա պարտավորությունը համարվում է կատարված հաջորդ աշխատանքային օրը:
3.27 Կողմերն իրավունք ունեն Գործարքի կնքման դեպքում համաձայնեցնել այլ էական պայմաններ:
3.28 Եթե կողմերը Գործարքի կատարման շրջանակներում չեն պայմանավորվում այլ դրույթների վերաբերյալ, ապա յուրաքանչյուր Գործարք կարգավորվում է Պայմաններով:
3.29 Կնքված Գործարքներից առաջացած վճարումները իրականացվում են վճարային վավերապայմաններին համաձայն Գործարքի կատարման օրը, որը Կողմերը նշում են Գործարքը կնքելու պահին:
3.30 Գործարքը կնքելու պահին Կողմերն իրավասու են սահմանել Վճարման առանձնահատուկ կարգ կամ տվյալ գործարքով նախատեսված վճարումների իրականացման համար նշել Պայմաններին կից Հավելված 3-ում նշված տվյալներից տարբերվող Վճարային վավերապայմաններ:
3.31 Այն դեպքում, եթե Կողմերից մեկը մյուս Կողմի օգտին սխալ վճարում է կատարել, Կողմը, որը ստացել է դրամական միջոցները, պետք է սխալը կատարող Կողմից ծանուցումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդող օրվա ընթացքում փոխանցի նշված միջոցները վճարումը ուղարկող Կողմի թղթակցային հաշվին: Նշված պայմանը չկատարելու դեպքում, Կողմը, որը չի վերադարձրել դրամական միջոցները, պետք է վճարի սույն համաձայնագրի 4.6 կետով նախատեսված տույժ՝ սկսած սխալ վճարումը հաստատող ծանուցումը ստանալու օրվան հաջորդող օրվանից:
3.32 Սույն Պայմանների համաձայն կնքված Գործարքների վճարումների հետ կապված բոլոր ծախսերը կատարում է վճարումն իրականացնող Կողմը:

4. Արտարժույթի առք և վաճառք

4.1 Կողմերի իրավասու աշխատակիցները (Դիլերները) վարում են բանակցություններ և կնքում են Արտարժույթի առուվաճառքի գործարք, համաձայնեցնելով դրա հետևյալ հիմնական/էական պայմանները՝

- Գնորդի և վաճառողի անվանումները,
- Գործարքի արժույթները,
- Գնվող/վաճառվող արժույթի գումարը,
- Գործարքի փոխարժեքը,
- Գործարքի արժույթներով կատարման (հաշվեգրման) ամսաթվերը,
- Վճարման վավերապայմաններ:

4.2 Պայմանների հիման վրա կնքված Արտարժույթի առուվաճառքի գործարքի համաձայն՝ Կողմերը պարտավոր են իրականացնել փոխադարձ վճարումներ կողմերի միջև համաձայնեցված արժույթով, գումարով, ելնելով համաձայնեցված փոխարժեքից և հաշվեգրման ամսաթվից, որոնք լիովին համապատասխանում են տրամադրված վճարային վավերապայմաններին և սույն Պայմանների 3-րդ կետի:
4.3 Գործարքի կնքման նպատակով Կողմերից մեկը ուղարկում է Գործարքի վավերապայմանները ներառող Առաջարկ համաձայն Հավելված 5-ի:

4.4 Մյուս կողմը ի պատասխան Առաջարկի ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, եթե Առաջարկում նշված վավերապայմանները համապատասխանում են Կողմերի բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին:

4.5 Եթե Առաջարկում նշված վավերապայմանները չեն համապատասխանում Կողմերի միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին, ապա Առաջարկը ստացած կողմը ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

4.6 Եթե Գործարքի պայմաններում այլ պատասխանատվություն չի սահմանված, պարտավորությունները չկատարող կամ ոչ պատշաճ կատարող Կողմը (այդ թվում, բայց չսահմանափակվելով, կատարման (հաշվեգրման) օրը խախտելը, ցանկացած վճարման ժամկետի խախտելը, վճարային վավերապայմանների պահանջները խախտելը և այլն) պարտավոր է մյուս կողմին վճարել տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.1 %-ի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրացուցային օրվա համար, որը հաշվարկվում է մինչև պարտավորությունների փաստացի կատարումը կամ սույն Պայմանների 4.8 կետով սահմանված հիմքով գործարքը լուծված համարելը: Հաշվարկված տույժի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

4.7 Գործարքից բխող պարտավորության կատարման համար ժամկետ սահմանված չլինելու դեպքում պարտավորությունը խախտող կողմը պարտավորվում է մյուս կողմի գրավոր պահանջով վերջինիս վճարել տուգանք՝ 25 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր խախտման համար: Նշված տուգանքը ենթակա է վճարման կողմի գրավոր պահանջում նշված ժամկետում:

4.8 Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները, ապա մյուս Կողմը իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց, իսկ պարտավորությունները խախտող Կողմը վճարում է տուգանք իր կողմից վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 5 (հինգ) %-ին համարժեք գումարի չափով, և կողմերը վերադարձնում են տվյալ Գործարքի գծով ստացված գումարները (բացառությամբ՝ 4.6-4.8 կետերով նախատեսված տույժի և(կամ) տուգանքի), որից հետո գործարքը համարվում է լուծված: Հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առավելագույնը դրա հիմքի առաջացման օրվան հաջորդող օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրը՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

4.9 Այն դեպքում, երբ 4.6-4.8 կետերով սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պարտավորությունները չխախտող Կողմի կրած փաստացի վնասներն ավելի մեծ կլինեն, քան 4.6-4.8 կետերի հիման վրա հաշվարկված տուժանքի գումարները, ապա պարտավորությունները չխախտող Կողմն իրավունք կունենա հաշվարկված տույժի և(կամ) տուգանքի գումարների փոխարեն պարտավորությունները խախտող Կողմից պահանջել հատուցելու կրած փաստացի վնասներն ամբողջությամբ:

5. Արտարժույթի կանխիկացում և ապականխիկացում

5.1 Արտարժույթի կանխիկացման/ապականխիկացման գործարքներ կնքվում են Բանկի և ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի միջև:

5.2 Արտարժույթի կանխիկացման/ապականխիկացման գործարքների դեպքում կողմերի Դիլերները համաձայնեցնում են գործարքի հետևյալ հիմնական/էական պայմանները ՝

- Կանխիկացնողի և ապականխիկացնողի անվանումները,
- Գործարքի արժույթը,
- Գործարքի գումարը,
- Միջնորդավճարի վճարման ժամկետները և կարգը (առկայության դեպքում),
- Գործարքի արժույթներով կատարման (հաշվեգրման) ամսաթվերը,
- Վճարման վավերապայմանները:

5.3 Արտարժույթի կանխիկացման գործարք կնքելու դեպքում Կողմ 2-ը Գործարքի կատարման օրը պարտավոր է համապատասխան անկանխիկ գումար փոխանցել Կողմ 1-ի համապատասխան արտարժութային հաշվին, իսկ Կողմ 1-ը պարտավոր է մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը իր դրամակրողից Կողմ 2-ին տրամադրել համապատասխան կանխիկ Արտարժույթը:

5.4 Արտարժույթի ապականխիկացման գործարք կնքելու դեպքում մի Կողմը Գործարքի կատարման օրը պարտավոր է մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը մյուս Կողմին տրամադրել Գործարքի համապատասխան գումարի չափով կանխիկ Արտարժույթը, իսկ այդ Կողմը՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում Գործարքի համապատասխան գումարի չափով անկանխիկ Արտարժույթը փոխանցել մյուս Կողմի համապատասխան արտարժութային հաշվին:

5.5 Միջնորդավճարի առկայության դեպքում միջնորդավճար վճարող Կողմը Գործարքի կատարման օրը պետք է ապահովի երկրորդ Կողմի ՀՀ դրամական հաշվին համապատասխան տոկոսագումարի փոխանցումը առկայության դեպքում:

5.6 Գործարքի կնքման նպատակով Կողմերից մեկը ուղարկում է Գործարքի վավերապայմանները ներառող Առաջարկ համաձայն Հավելված 6-ի:

5.7 Մյուս կողմը ի պատասխան Առաջարկի ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, եթե Առաջարկում նշված վավերապայմանները համապատասխանում են Կողմերի բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին:

5.8 Եթե Առաջարկում նշված վավերապայմանները չեն համապատասխանում Կողմերի միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին, ապա Առաջարկը ստացած կողմը ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

5.9 Եթե Գործարքի պայմաններում այլ պատասխանատվություն չի սահմանված, պարտավորությունները չկատարող կամ ոչ պատշաճ կատարող Կողմը (այդ թվում, բայց չսահմանափակվելով, կատարման (հաշվեգրման) օրը խախտելը, ցանկացած վճարման ժամկետի խախտելը, վճարային վավերապայմանների պահանջները խախտելը և այլն) պարտավոր է մյուս կողմին վճարել տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.1 %-ի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրացուցային օրվա համար, որը հաշվարկվում է մինչև պարտավորությունների փաստացի կատարումը կամ սույն Պայմանների 5.11 կետով սահմանված հիմքով գործարքը լուծված համարելը: Հաշվարկված տույժի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

5.10 Գործարքից բխող պարտավորության կատարման համար ժամկետ սահմանված չլինելու դեպքում պարտավորությունը խախտող կողմը պարտավորվում է մյուս կողմի գրավոր պահանջով վերջինիս վճարել տուգանք՝ 25 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր խախտման համար: Նշված տուգանքը ենթակա է վճարման կողմի գրավոր պահանջում նշված ժամկետում:

5.11 Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները, ապա մյուս Կողմը իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց, իսկ պարտավորությունները խախտող Կողմը վճարում է տուգանք իր կողմից վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 5 (հինգ) %-ին համարժեք գումարի չափով, և կողմերը վերադարձնում են տվյալ Գործարքի գծով ստացված գումարները (բացառությամբ՝ 5.9-5.11 կետերով նախատեսված տույժի և(կամ) տուգանքի), որից հետո գործարքը համարվում է լուծված: Հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առավելագույնը դրա հիմքի առաջացման օրվան հաջորդող օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրը՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

5.12 Այն դեպքում, երբ 5.9-5.11 կետերով սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պարտավորությունները չխախտող Կողմի կրած փաստացի վնասներն ավելի մեծ կլինեն, քան 5.9-5.11 կետերի հիման վրա հաշվարկված տուժանքի գումարները, ապա պարտավորությունները չխախտող Կողմն իրավունք կունենա հաշվարկված տույժի և(կամ) տուգանքի գումարների փոխարեն պարտավորությունները խախտող Կողմից պահանջել հատուցելու կրած փաստացի վնասներն ամբողջությամբ:

6. Սվոփ գործարքների իրականացման կարգը

6.1 Սվոփ գործարքի դեպքում Կողմերի Դիլերները վարում են բանակցություններ, համաձայնեցնելով դրա հետևյալ հիմնական/էական պայմանները ՝

- Գնորդի և վաճառողի անվանումները,
- Գործարքի արժույթները,
- Գնվող/վաճառվող արժույթի գումարը,
- Գործարքի փոխարժեքը, հակադարձ գործարքի փոխարժեքը, տոկոսադրույքը, ֆիքսված և/կամ լողացող տոկոսադրույքով հոսքերը,
- Գործարքի արժույթներով կատարման (հաշվեգրման) ամսաթիվը, հակադարձ գործարքի կատարման (հաշվեգրման) ամսաթիվը,
- Վճարման վավերապայմաններ:

6.2 Սվոփ գործարքների կնքման օրվանից մինչև կատարման օրը ընկած ժամանակահատվածում գործարքի փոխարժեքի 6 և ավելի տոկոս տատանման դեպքում, գործարքի չկատարման ռիսկը նվազեցնելու նպատակով, մի կողմը մյուս կողմից իրավունք ունի պահանջել ավանդ կամ վարկ՝ փոխարժեքի տատանման արդյունքում գոյացած տարբերության չափով: Կողմերը կարող են ավանդի/վարկի նկատմամբ հաշվարկել շուկայական տոկոսներ: Ավանդի/վարկի գումարը ենթակա է վերադարձման Գործարքի կատարման օրը, եթե Կողմերի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

6.3 Պայմաններով սահմանված սվոփ գործարքի տոկոսագումարը, տուգանային տոկոսագումարները, միջնորդավճարները հաշվարկվում են օրական՝ հաշվարկի համար հիմք ընդունելով տարին 365 կամ 366 օր:

6.4 Պայմաններով սահմանված սվոփ գործարքի տոկոսագումարը տուգանային տոկոսագումարները, միջնորդավճարները հաշվարկվում և վճարվում են կատարման օրվան նախորդող օրվա ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարվող փոխարժեքով:

6.5 Գործարքի կնքման նպատակով Կողմերից մեկը ուղարկում է Գործարքի վավերապայմանները ներառող Առաջարկ համաձայն Հավելված 7-ի:

6.6 Մյուս կողմը ի պատասխան Առաջարկի ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, եթե Առաջարկում նշված վավերապայմանները համապատասխանում են Կողմերի բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին:

6.7 Եթե Առաջարկում նշված վավերապայմանները չեն համապատասխանում Կողմերի միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին, ապա Առաջարկը ստացած կողմը ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

6.8 Գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ համաձայն Հավելված 17-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը Գործարքի վաղաժամ մարելու առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով համարվում է վաղաժամկետ մարված:

6.9 Գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքի երկարաձգման առաջարկ համաձայն Հավելված 18-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը համարվում է երկարաձգված Գործարքի երկարաձգման առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով:

6.10 Եթե Գործարքի պայմաններում այլ պատասխանատվություն չի սահմանված, պարտավորությունները չկատարող կամ ոչ պատշաճ կատարող Կողմը (այդ թվում, բայց չսահմանափակվելով, կատարման (հաշվեգրման) օրը խախտելը, ցանկացած վճարման ժամկետի խախտելը, վճարային վավերապայմանների պահանջները խախտելը և այլն) պարտավոր է մյուս կողմին վճարել տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.1 %-ի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրացուցային օրվա համար, որը հաշվարկվում է մինչև պարտավորությունների փաստացի

կատարումը կամ սույն Պայմանների 6.12 կետով սահմանված հիմքով գործարքը լուծված համարելը: Հաշվարկված տույժի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

6.11 Գործարքից բխող պարտավորության կատարման համար ժամկետ սահմանված չլինելու դեպքում պարտավորությունը խախտող կողմը պարտավորվում է մյուս կողմի գրավոր պահանջով վերջինիս վճարել տուգանք՝ 25 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր խախտման համար: Նշված տուգանքը ենթակա է վճարման կողմի գրավոր պահանջում նշված ժամկետում:

6.12 Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները, ապա մյուս Կողմը իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց, իսկ պարտավորությունները խախտող Կողմը վճարում է տուգանք իր կողմից վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 5 (հինգ) %-ին համարժեք գումարի չափով, և կողմերը վերադարձնում են տվյալ Գործարքի գծով ստացված գումարները (բացառությամբ՝ 6.10-6.12 կետերով նախատեսված տույժի և(կամ) տուգանքի), որից հետո գործարքը համարվում է լուծված: Հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առավելագույնը դրա հիմքի առաջացման օրվան հաջորդող օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրը՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

6.13 Այն դեպքում, երբ 6.10-6.12 կետերով սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պարտավորությունները չխախտող Կողմի կրած փաստացի վնասներն ավելի մեծ կլինեն, քան 6.10-6.12 կետերի հիման վրա հաշվարկված տուժանքի գումարները, ապա պարտավորությունները չխախտող Կողմն իրավունք կունենա հաշվարկված տույժի և(կամ) տուգանքի գումարների փոխարեն պարտավորությունները խախտող Կողմից պահանջել հատուցելու կրած փաստացի վնասներն ամբողջությամբ:

7. Արժույթային ֆորվարդ գործարքներ

7.1 Արժութային ֆորվարդ գործարքի դեպքում Կողմերի Դիլերները վարում են բանակցություններ, համաձայնեցնելով դրա հետևյալ հիմնական/էական պայմանները `

7.2 Գնորդի և վաճառողի անվանումները,

7.3 Գործարքի արժույթը,

7.4 Գնվող/վաճառվող արժույթի գումարը,

7.5 Գործարքի սփոթ, ֆորվարդ փոխարժեքները,

7.6 Գործարքի արժույթներով կատարման (հաշվեգրման) ամսաթիվը,

7.7 Վճարման վավերապայմաններ:

7.8 Գործարքի կատարման օրը մի Կողմը պարտավորվում է վաճառել/գնել մյուս Կողմին/ից համապատասխան արժույթը, նախօրոք պայմանավորված փոխարժեքով և ծավալով, իսկ մյուս Կողմը պարտավորվում է գնել/վաճառել այն:

7.9 Գործարքի կնքման նպատակով Կողմերից մեկը ուղարկում է Գործարքի վավերապայմանները ներառող Առաջարկ համաձայն Հավելված 8-ի:

7.10 Մյուս կողմը ի պատասխան Առաջարկի ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, եթե Առաջարկում նշված վավերապայմանները համապատասխանում են Կողմերի բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին:

7.11 Եթե Առաջարկում նշված վավերապայմանները չեն համապատասխանում Կողմերի միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին, ապա Առաջարկը ստացած կողմը ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

7.12 Գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ համաձայն Հավելված 17-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի,

ինչից հետո Գործարքը Գործարքի վաղաժամ մարելու առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով համարվում է վաղաժամկետ մարված:

7.13 Գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքի երկարաձգման առաջարկ համաձայն Հավելված 18-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը համարվում է երկարաձգված Գործարքի երկարաձգման առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով:

7.14 Կողմերը պարտավորվում են Սփոթ գործարքի և Ֆորվարդ գործարքի՝ Առաջարկով և Հաստատման մեջ սահմանված օրերին ապահովել վաճառվող և ձեռքբերվող արժույթով և ծավալով գումարները:

7.15 Եթե Գործարքի պայմաններում այլ պատասխանատվություն չի սահմանված, պարտավորությունները չկատարող կամ ոչ պատշաճ կատարող Կողմը (այդ թվում, բայց չսահմանափակվելով, կատարման (հաշվեգրման) օրը խախտելը, ցանկացած վճարման ժամկետի խախտելը, վճարային վավերապայմանների պահանջները խախտելը և այլն) պարտավոր է մյուս կողմին վճարել տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.1 %-ի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրացուցային օրվա համար, որը հաշվարկվում է մինչև պարտավորությունների փաստացի կատարումը կամ սույն Պայմանների 7.17 կետով սահմանված հիմքով գործարքը լուծված համարելը: Հաշվարկված տույժի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

7.16 Գործարքից բխող պարտավորության կատարման համար ժամկետ սահմանված չլինելու դեպքում պարտավորությունը խախտող կողմը պարտավորվում է մյուս կողմի գրավոր պահանջով վերջինիս վճարել տուգանք՝ 25 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր խախտման համար: Նշված տուգանքը ենթակա է վճարման կողմի գրավոր պահանջում նշված ժամկետում:

7.17 Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները, ապա մյուս Կողմը իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց, իսկ պարտավորությունները խախտող Կողմը վճարում է տուգանք իր կողմից վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 5 (հինգ) %-ին համարժեք գումարի չափով, և կողմերը վերադարձնում են տվյալ Գործարքի գծով ստացված գումարները (բացառությամբ՝ 7.15-7.17 կետերով նախատեսված տույժի և(կամ) տուգանքի), որից հետո գործարքը համարվում է լուծված: Հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առավելագույնը դրա հիմքի առաջացման օրվան հաջորդող օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրը՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

7.18 Այն դեպքում, երբ 7.15-7.17 կետերով սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պարտավորությունները չխախտող Կողմի կրած փաստացի վնասներն ավելի մեծ կլինեն, քան 7.15-7.17 կետերի հիման վրա հաշվարկված տուժանքի գումարները, ապա պարտավորությունները չխախտող Կողմն իրավունք կունենա հաշվարկված տույժի և(կամ) տուգանքի գումարների փոխարեն պարտավորությունները խախտող Կողմից պահանջել հատուցելու կրած փաստացի վնասներն ամբողջությամբ:

8. Ավանդային գործարքներ

8.1 Ավանդային գործարքներ կնքվում են Բանկի և ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի, ինչպես նաև ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկ չհանդիսացող ֆինանսական կազմակերպությունների միջև:

8.2 Ավանդային գործարք կնքելու համար Ավանդատուն Ավանդառուին ներկայացնում է Առաջարկ համաձայն Հավելված 9-ի:

8.3 Ավանդառուն Առաջարկի պայմաններին համաձայն լինելու դեպքում Ավանդատուին է ներկայացնում Հաստատում համաձայն Հավելված 15-ի: Առաջարկի պայմաններին համաձայն չլինելու դեպքում ներկայացնում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

8.4 Ավանդային գործարքների դեպքում Ավանդատուն (Վարկատուն) Գործարքի կնքումից հետո Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում փոխանցում է Գործարքի գումարը Ավանդառուի (Վարկառուի)՝ Հաստատման մեջ նշված դրամական հաշվին, իսկ Գործարքի մարման օրն Ավանդառուն (Վարկառուն) Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում փոխանցում է Գործարքի գումարը և հաշվեգրված տոկոսագումարն Ավանդատուի (Վարկատուի)՝ Առաջարկում/Հաստատման մեջ նշված դրամական հաշվին:

8.5 Ավանդային գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ համաձայն Հավելված 17-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը Գործարքի վաղաժամ մարելու առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով համարվում է վաղաժամկետ մարված:

8.6 Ավանդային գործարքի ժամկետի երկարաձգման դեպքում Ավանդատուն Ավանդառուին է ներկայացնում գործարքի երկարաձգման առաջարկ համաձայն Հավելված 18-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը համարվում է երկարաձգված Գործարքի երկարաձգման առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով:

9. Արժեթղթերի գրավադրմամբ վարկային գործարքներ

9.1 Արժեթղթերի գրավադրմամբ վարկային գործարք կնքելու համար Գրավատու/Վարկառու հանդիսացող Կողմը ներկայացնում է Գրավային/Վարկային գործարքի Առաջարկ համաձայն Հավելված 10-ի:

9.2 Գրավառու/Վարկատու հանդիսացող Կողմը Առաջարկի պայմաններին համաձայն լինելու դեպքում Գրավատու/Վարկառու Կողմին է ներկայացնում Հաստատում համաձայն Հավելված 15-ի: Առաջարկի պայմաններին համաձայն չլինելու դեպքում ներկայացնում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

9.3 Արժեթղթերի գրավադրմամբ վարկային գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ համաձայն Հավելված 17-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը Գործարքի վաղաժամ մարելու առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով համարվում է վաղաժամկետ մարված:

9.4 Արժեթղթերի գրավադրմամբ վարկային գործարքի ժամկետի երկարաձգման դեպքում Գրավատու/Վարկառու Կողմը Գրավառու/Վարկատու Կողմին է ներկայացնում գործարքի երկարաձգման առաջարկ համաձայն Հավելված 18-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը համարվում է երկարաձգված Գործարքի երկարաձգման առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով:

9.5 Գործարքի ժամկետի երկարաձգման կամ վաղաժամ մարման հաստատման դեպքում Կողմերը պարտավորվում են իրականացնել Գործարքի վավերապայմանների փոփոխման բնույթից բխող իրենց պարտավորությունը, այդ թվում՝ Գործարքի ժամկետի երկարաձգման կամ վաղաժամ մարման դեպքում՝ մինչև պայմանների փոփոխման օրը կուտակված տոկոսագումարների վճարումը, իսկ Մերժման դեպքում Կողմերը պարտավորվում են իրականացնել Գործարքի մարումը՝ կնքված Գործարքի պայմաններով: Գործարքի ժամկետի երկարաձգման կամ վաղաժամ մարման հետ կապված պայմանների Առաջարկի Հաստատման դեպքում, եթե տոկոսագումար վճարող Կողմի դրամական հաշիվները վարվում են մյուս կողմի մոտ, ապա տոկոսագումար վճարող Կողմը պարտավոր է ապահովել մինչև պայմանների փոփոխման օրը կուտակված տոկոսագումարները մյուս Կողմի մոտ վարվող իր դրամական հաշվի համարին՝ մյուս Կողմին ընձեռելով իրավունք տոկոսագումարն անակցեպտ կերպով գանձելու համար, ընդ որում Կողմի կողմից սահմանված ժամկետում նշված գումարը իր՝ մյուս Կողմի մոտ վարվող հաշվին ապահովելը սույնի իմաստով համարվում է փոխանցման պարտավորության պատշաճ կատարում՝ անկախ մյուս Կողմի կողմից այդպիսի միջոցների փաստացի գանձման հանգամանքի, պայմանով, որ Կողմը պատշաճ կերպով ապահովել է մյուս Կողմի՝ գումարը անակցեպտ գանձելու հնարավորությունը:

9.6 Եթե Գործարքը կատարվում է առաքում վճարման դիմաց (DvP) սկզբունքով, ապա Գործարքի կատարման օրը Գրավատու-Վարկառուն մինչև հայտում (Առաջարկում) և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը

ներառյալ Պահառուին (Ենթապահառուին) է ներկայացնում Արժեթղթերի գրավադրման գրավատուի հանձնարարական, իսկ Գրավառու-Վարկատուն՝ Արժեթղթերի գրավ ընդունման գրավառուի հանձնարարական: Գործարքի մարման օրը Գրավատու-Վարկառուն մինչև հայտում (Առաջարկում) և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը ներառյալ Պահառուին (Ենթապահառուին) է ներկայացնում Արժեթղթերի գրավից հանման գրավատուի հանձնարարական, վերադարձնելով Գործարքի գումարը և հաշվեգրված տոկոսագումարը, իսկ Գրավառու-Վարկատուն՝ Արժեթղթերի գրավից հանման գրավառուի հանձնարարական:

9.7 Եթե Գործարքը կատարվում է ազատ առաքման (ST) կամ առաքում համաձայնությամբ (FoP) սկզբունքով, ապա Գործարքի կատարման օրը Գրավատու-Վարկառուն մինչև Գրավային Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը ներառյալ, Պահառուին (Ենթապահառուին) է ներկայացնում Արժեթղթերի գրավադրման միակողմանի հանձնարարական, իսկ Գրավառու-Վարկատուն Արժեթղթերի գրավադրման վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո՝ մինչև Վարկային Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը ներառյալ, փոխանցում է Գործարքի գումարը Գրավատու-Վարկառուի՝ Առաջարկում նշված դրամական հաշվին: Գործարքի մարման օրը Գրավատու-Վարկառուն Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում փոխանցում է Գործարքի գումարը և հաշվեգրված տոկոսագումարը Գրավառու-Վարկատուի՝ Վարկային գործարքի հաստատման մեջ նշված դրամական (արտարժութային) հաշիվներին, Գրավառու-Վարկատուն փոխանցումների կատարման վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո՝ մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը ներառյալ, Պահառուին (Ենթապահառուին) է ներկայացնում Արժեթղթերի գրավից հանման միակողմանի հանձնարարական:

9.8 Գրավադրված Արժեթղթերն ապահովում են վարկային գործարքի պահանջն այն չափով, որն առկա է բավարարման պահին, այդ թվում՝ վարկի գումարը, դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները, այդ թվում՝ ժամկետանց, պատճառված վնասի հատուցումը, տույժերի և տուգանքի գումարները, ինչպես նաև Գործարքի առարկա հանդիսացող դրամական միջոցների և ապահովվածության միջոցների բռնագանձման հետ կապված Գրավառու-Վարկատուի կատարած ծախսերի հատուցումը:

9.9 Արժեթղթերի գրավը ձևակերպվում է գրավառուի օգտին այդ Արժեթղթերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցմամբ: Սույն Պայմանների համաձայն՝ գրավի իրավունքը տարածվում է նաև գրավ դրված Արժեթղթերի և կուտակված տոկոսագումարների (եթե սահմանված է գործարքի պայմաններով) վրա:

9.10 Գրավադրված Արժեթղթերի մարման արդյունքում գոյացող դրամական միջոցները՝ հանդիսանալով Գրավատուի սեփականությունը, համարվում են վերջինիս կողմից գրավադրված՝ հօգուտ Գրավառուի: Եթե գրավադրված Արժեթղթերը մարման օրվա դրությամբ գրավից հանված չեն, ապա Գրավառուի գրավի իրավունքը տարածվում է համապատասխան Արժեթղթերի մարման արդյունքում Գրավատուին վճարվող դրամական միջոցների վրա:

9.11 Գրավի առարկա Արժեթղթերը կամ դրանց մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները կարող են ազատվել գրավից միայն Գրավառուի համապատասխան գրավոր դիմումի/հանձնարարության/համաձայնության հիման վրա, կամ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի հիման վրա:

9.12 Գրավառուն իրավունք ունի կիրառել Հեյրքաթ գրավի առարկա Արժեթղթերի շուկայական արժեքի վրա:

9.13 Գնահատված արժեքից գրավի առարկա Արժեթղթերի արժեքի նվազման դեպքում Գրավառուն այդ մասին տեղեկացնում է Գրավատուին:

9.14 Գրավատուն պարտավոր է մարել գործարքի գումարը նվազմանը համապատասխան 9.13 կետով սահմանված տեղեկացումը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ Գործարքի պայմաններով:

9.15 Գրավատուն իրավունք ունի միակողմանի դադարեցնել գործարքը, ինչպես նաև մարել իր նկատմամբ Գրավատուի պարտավորությունները գրավի առարկա Արժեթղթերի հաշվին հետևյալ դեպքերում.

9.15.1 Եթե Գրավատուն չի կատարում 9.14 կետով սահմանված իր պարտավորությունը,

9.15.2 Եթե 9.14 կետում նշված ժամանակահատվածի ընթացքում գրավի առարկա Արժեթղթերի շուկայական արժեքը նվազում է գրավի առարկա Արժեթղթերի շուկայական արժեքի անկման թույլատրելի առավելագույն չափից:

9.16 Գործարքի միակողմանի դադարեցման դեպքում Գրավառուն այդ մասին Պայմաններով սահմանված եղանակով տեղեկացնելով Գրավատուին:

9.17 Եթե Առաջարկում և Հաստատման մեջ սահմանված տոկոսագումարի վճարման օր(եր)ը տարբեր է Գործարքի մարման օրվանից, ապա տոկոսագումար վճարող Կողմը տոկոսագումարի վճարման օրը փոխանցում է հաշվեգրված տոկոսագումարը տոկոսագումար ստացող Կողմի դրամական հաշվին, կամ հաշվեգրված տոկոսագումարի չափով գումար ապահովում է իր՝ տոկոսագումար ստացող Կողմի մոտ վարվող դրամական հաշվին վերջինիս իրավունք ընձեռելով անակցեպտ կերպով հաշվեգրված տոկոսագումարի չափով գումար գանձելու համար:

9.18 Եթե Կողմերից մեկի՝ Առաջարկում և Հաստատման մեջ նշված դրամական միջոցների հաշիվները վարվում են մյուս Կողմի մոտ և Գործարքի պայմաններով նախատեսվում է դրամական միջոցների փոխանցում, ապա հաշիվներ վարող Կողմը Գործարքի կատարման օրվա ընթացքում անակցեպտ կարգով գանձում է Գործարքի պայմաններով սահմանված դրամական միջոցները:

9.19 Եթե Կողմերից մեկի դեպո հաշիվները վարվում են որևէ Ենթապահառուի մոտ, ապա տվյալ Կողմը պարտավոր է 9.6 և 9.7 ենթակետերում նշված հանձնարարականները ներկայացնել Ենթապահառուին՝ սույն Պայմաններով սահմանված ժամերի ընթացքում:

9.20 Սույն հոդվածի 9.6 և 9.7 ենթակետերում նշված հանձնարարականները կողմերի կողմից պետք է ներկայացվեն, ինչպես նաև փոխանցումները պետք է կատարվեն համապատասխան Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում: Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերից դուրս ներկայացված հանձնարարականները համարվում են ուշացմամբ ուղարկված (ստացված հաջորդ Աշխատանքային օրը):

9.21 Սույն հոդվածի 9.6 և 9.7 ենթակետերում նշված հանձնարարականները պետք է ներկայացվեն Պահառուի և (կամ) Ենթապահառուի՝ ներկայացման պահի դրությամբ գործող կանոնների համաձայն:

9.22 Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման օրը ներառյալ, ընդ որում՝ տոկոսագումարը վճարվում է Առաջարկում և Հաստատման մեջ նշված տոկոսագումարի վճարման օրը:

9.23 Եթե Գործարքի մարման օրը չի հանդիսանում աշխատանքային օր, ապա մարման օր է հանդիսանում դրան հաջորդող աշխատանքային օրը. ընդ որում տոկոսների հաշվարկը իրականացվում է նաև ոչ աշխատանքային օրերի համար (Գործարքների տոկոսները հաշվարկվում են այդ գործարքի փաստացի օրերի քանակով):

9.24 Կողմերի՝ Պայմանների սույն հոդվածից բխող հարաբերությունները կարգավորվում, իսկ նրանց իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15 (Գրավի իրավունք) գլխում նախատեսված կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններով:

9.25 Վարկառու-Գրավատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք է վերապահում Վարկատու-Գրավառուին վարկը, հաշվարկված տոկոսները և տուժանքները Վարկային գործարքով նախատեսված ժամկետներում չմարելու, ինչպես նաև սույն Պայմանների պահանջները չկատարելու դեպքում, իրականացնել Վարկային գործարքի ապահովվածություն հանդիսացող գույքի արտադատական կարգով իրացում՝ օրենքով նախատեսված կարգով ապահովվածություն հանիսացող գույքի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու, այդ թվում՝ վարկային պարտավորության համապատասխան չափի դիմաց ապահովվածություն հանիսացող գույքն ի սեփականություն ընդունելը կամ երրորդ անձին ի սեփականություն հանձնելու միջոցով:

9.26 Սույն հոդվածի պահանջների կատարմանը Վարկառու-Գրավատուի կողմից ուղղակի կամ անուղղակի կերպով խոչընդոտ հանդիսանալն իրավունք է տալիս Վարկատու-Գրավառուին դիմել դատարան՝ պարտքի գումարը բռնագանձելու նպատակով:

9.27 Գրավադրված գույքը կարող է իրացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, դրա համար թույլտվություն (լիցենզիա) ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

9.28 Գրավադրված արժեքների իրացման ձգձգումը, եթե չկան ապացույցներ, որ Գրավառուն ուղղակիորեն խոչընդոտել է նրանց իրացմանը, չի կարող հիմք հանդիսանալ Գրավառուի նկատմամբ Գրավատուի պարտավորությունների աճի դադարեցման համար:

10. Առանց ապահովվածության վարկային գործարքներ

10.1 Առանց ապահովվածության վարկային գործարք կնքելու համար Վարկառուն Վարկատուին ներկայացնում է Առաջարկ համաձայն Հավելված 11-ի:
10.2 Վարկատուն Առաջարկի պայմաններին համաձայն լինելու դեպքում Վարկառուին է ներկայացնում Հաստատում համաձայն Հավելված 15-ի: Առաջարկի պայմաններին համաձայն չլինելու դեպքում ներկայացնում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:
10.3 Ավանդային գործարքների դեպքում Վարկատուն Գործարքի կնքումից հետո Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում փոխանցում է Գործարքի գումարը Վարկառուի՝ Հաստատման մեջ նշված դրամական հաշվին, իսկ Գործարքի մարման օրն Վարկառուն Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում փոխանցում է Գործարքի գումարը և հաշվեգրված տոկոսագումարն Վարկատուի՝ Հաստատման մեջ նշված դրամական հաշվին:
10.4 Առանց ապահովվածության վարկային գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ համաձայն Հավելված 17-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը Գործարքի վաղաժամ մարելու առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով համարվում է վաղաժամկետ մարված:
10.5 Առանց ապահովվածության վարկային գործարքի ժամկետի երկարաձգման դեպքում Վարկառուն Վարկատուին է ներկայացնում գործարքի երկարաձգման առաջարկ համաձայն Հավելված 18-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում՝ համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը համարվում է երկարաձգված Գործարքի երկարաձգման առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով:

11. Ռեպո/հակադարձ ռեպո

11.1 Ռեպո/հակադարձ ռեպո գործարք կնքելու համար Կողմերից մեկը մյուս Կողմին ներկայացնում է Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի Առաջարկ համաձայն Հավելված 12-ի:
11.2 Առաջարկը ստացած Կողմը Առաջարկի պայմաններին համաձայն լինելու դեպքում Առաջարկը ներկայացնող Կողմին ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի: Առաջարկի պայմաններին համաձայն չլինելու դեպքում ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:
11.3 Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի կնքումից հետո ըստ անհրաժեշտության Կողմերից մեկը կարող է ուղարկել Գործարքը վաղաժամ մարելու առաջարկ համաձայն Հավելված 17-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը Գործարքի վաղաժամ մարելու առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով համարվում է վաղաժամկետ մարված:
11.4 Գործարքի ժամկետի երկարաձգման դեպքում Կողմերից մեկը մյուս Կողմին է ներկայացնում գործարքի երկարաձգման առաջարկ համաձայն Հավելված 18-ի, իսկ մյուս Կողմը ուղարկում է Հաստատում՝ համաձայն Հավելված 15-ի, ինչից հետո Գործարքը համարվում է երկարաձգված Գործարքի երկարաձգման առաջարկում և Հաստատման մեջ նշված պայմաններով:
11.5 Առաջարկով և Հաստատումով սահմանվում է հաշվարկների ռիսկը կրող կողմ: Հաշվարկների ռիսկ չկրող Կողմը կարող է միակողմանի կարգով հետաձգել իր կողմից կատարվելիք վճարման (փոխանցման) գործառնության օրը մինչև մյուս (հաշվարկների ռիսկը կրող) Կողմի ժամկետանց վճարման (փոխանցման) ենթակա ամբողջ ծավալով գումարի (Արժեթղթերի) ստացման օրվանը հաջորդող երկրորդ բանկային օրը:
11.6 Կողմերի միջև Գործարքներ իրականացնելիս Արժեթղթերի և դրամական միջոցների շարժն իրականացվում է Կողմերի՝ Առաջարկում և Հաստատման մեջ նշված դեպո և դրամական հաշիվներով:
11.7 Կողմերի միջև Գործարքների հաշվարկներն իրականացվում են առաքում վճարման դիմաց (DvP), ազատ առաքման (ST) և առաքում համաձայնեցմամբ (FoP) սկզբունքներով:
11.8 Եթե գործարքները կնքվում են առաքում վճարման դիմաց (DvP) սկզբունքով, ապա Գործարքի կատարման օրը Վաճառողը պարտավոր է մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը

Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել Արժեթղթերի վաճառքի հանձնարարական, իսկ Գնորդը՝ Արժեթղթերի գնման հանձնարարական: Գործարքի մարման օրը Գնորդը պարտավոր է մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել Արժեթղթերի վաճառքի հանձնարարական, իսկ Վաճառողը՝ Արժեթղթերի գնման հանձնարարական:

11.9 Եթե Գործարքները կնքվում են ազատ առաքման (ST) կամ առաքում համաձայնությամբ (FoP) սկզբունքով, ապա Գործարքի կատարման օրը Առաջարկում և Հաստատման մեջ նշված ռիսկ կրող Կողմը պարտավորվում է մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել Արժեթղթերի ազատ առաքման հանձնարարական որպես Վաճառող կամ իրականացնել դրամական միջոցների փոխանցում որպես Գնորդ, ռիսկ չկրող Կողմը պարտավորվում է ռիսկ կրող Կողմի համապատասխան փոխանցումների վերաբերյալ ծանուցումները ստանալուց հետո՝ մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը իրականացնել համապատասխան դրամական միջոցների փոխանցումը որպես Գնորդ կամ Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել ազատ առաքման հանձնարարական որպես Վաճառող: Գործարքի մարման օրը ռիսկ կրող Կողմը պարտավորվում է մինչև հայտում և հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել Արժեթղթերի ազատ առաքման հանձնարարական որպես Գնորդ կամ իրականացնել դրամական միջոցների փոխանցում որպես Վաճառող, ռիսկ չկրող Կողմը պարտավորվում է ռիսկ կրող Կողմի համապատասխան փոխանցումների վերաբերյալ ծանուցումները ստանալուց հետո մինչև Հայտում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը իրականացնել համապատասխան դրամական միջոցների փոխանցումը, եթե հանդիսանում է Վաճառող կամ Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել ազատ առաքման հանձնարարական, եթե հանդիսանում է Գնորդ: Եթե Կողմերից ոչ մեկը չի հանդիսանում ռիսկ կրող կողմ, Կողմերը պարտավոր են կատարել արժեթղթերի և դրամական միջոցների համապատասխան փոխանցումները մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը:

11.10 Եթե Կողմերից մեկի դրամական հաշիվները վարվում են մյուս Կողմի մոտ, ապա հաշիվներ վարող Կողմը իրավունք ունի Գործարքի կատարման օրվա ընթացքում անակցեպտ գանձել Առաջարկում և Հաստատման մեջ սահմանված դրամական միջոցները, եթե հանդիսանում է Վաճառող կողմ և Գործարքի մարման օրվա ընթացքում անակցեպտ գանձել Առաջարկում և Հաստատման մեջ սահմանված դրամական միջոցները և կուտակված տոկոսագումարները, եթե հանդիսանում է Գնորդ կողմ՝ այդ մասին բանավոր տեղեկացնելով մյուս Կողմին:

11.11 Եթե Կողմերից մեկի դեպո հաշիվները վարվում են որևէ Ենթապահառուի մոտ, ապա տվյալ Կողմը պարտավոր է 11.7 և 11.8 ենթակետերում նշված հանձնարարականները ներկայացնել Ենթապահառուին՝ սույն Պայմաններով սահմանված ժամերի ընթացքում:

11.12 Սույն հոդվածի 11.7 և 11.8 ենթակետերում նշված հանձնարարականները Գնորդի և Վաճառողի կողմից պետք է ներկայացվեն, ինչպես նաև փոխանցումները պետք է կատարվեն Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում: Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերից դուրս ներկայացված հանձնարարականները համարվում են ուշացմամբ ուղարկված (ստացված հաջորդ Աշխատանքային օրը):

11.13 Ռեպո գործարքի երկարաձգման կամ վաղաժամ մարման դեպքում Կողմերը պարտավորվում են իրականացնել պայմանների փոփոխման բնույթից բխող իրենց պարտավորությունը, այդ թվում՝ Գործարքի ժամկետի երկարաձգման կամ կարճման դեպքում՝ մինչև պայմանների փոփոխման օրը կուտակված տոկոսագումարների վճարումը, իսկ մերժման դեպքում Կողմերը պարտավորվում են իրականացնել Գործարքի մարումը՝ կնքված Գործարքի պայմաններով: Ռեպո գործարքի ժամկետի երկարաձգման կամ կարճման հետ կապված պայմանների փոփոխման հայտի հաստատման դեպքում, եթե Վաճառողի դրամական հաշիվները վարվում են Գնորդի մոտ, ապա Վաճառողը պարտավոր է ապահովել մինչև պայմանների փոփոխման օրը կուտակված տոկոսագումարները Գնորդի մոտ վարվող իր դրամական հաշվի համարին՝ Գնորդին ընձեռելով իրավունք տոկոսագումարն անակցեպտ կերպով գանձելու համար:

11.14 Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման օրը ներառյալ, ընդ որում՝ տոկոսագումարները վճարվում են

Գործարքի մարման օրը, բացառությամբ երկարաձգման դեպքի, երբ տոկոսագումարները վճարվում են Գործարքի պայմանների փոփոխման օրը:

11.15 Գործարքի կատարման օրը Գործարքին համապատասխան Արժեթղթերը սույն Պայմաններով սահմանված ժամկետներում Գնորդի դեպո հաշվին չապահովելու դեպքում Վաճառողը Գնորդին վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, ընդ որում Առաջարկը և Հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

11.16 Գործարքի կատարման օրը Գործարքին համապատասխան դրամական միջոցները Վաճառողի մոտ վարվող՝ Գնորդի համապատասխան դրամական հաշվում առկա չլինելու կամ Վաճառողի դրամական հաշվին չապահովելու դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տուժանք Գործարքի գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, ընդ որում Առաջարկը և Հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

11.17 Գործարքի մարման օրը Վաճառողի՝ Գնորդի մոտ վարվող համապատասխան դրամական հաշվում Գործարքին համապատասխան դրամական միջոցները և կուտակված տոկոսագումարն առկա չլինելու կամ Գնորդի դրամական հաշվին չապահովելու դեպքում Վաճառողը Գնորդին վճարում է տուժանք՝ հայտում նշված գործարքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:

11.18 Սույն հոդվածով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից առավելագույնը երեք աշխատանքային օր: Եթե այդ ժամանակահատվածի ընթացքում Վաճառողի կողմից համապատասխան վճարում չի կատարվում, ապա Գործարքի Կողմերի միջև դադարում են այդ Գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները, բացառությամբ չվճարված տուժանքների վճարման հետ կապված պարտականությունից:

11.19 Գործարքի մարման օրը Գործարքին համապատասխան Արժեթղթերը Վաճառողի դեպո հաշվին չապահովելու դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:

11.20 Սույն հոդվածով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից առավելագույնը երեք աշխատանքային օր: Եթե այդ ժամանակահատվածի ընթացքում Գնորդի կողմից համապատասխան Արժեթղթերի փոխանցում չի կատարվում, ապա Գործարքի Կողմերի միջև դադարում են այդ Գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները, բացառությամբ չվճարված տուժանքների վճարման հետ կապված պարտականությունից:

11.21 Սույն հոդվածով նախատեսված տուժանքների վճարումները (փոխանցումները) պետք է կատարվեն դրանց հիմքի առաջացման հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու: Բոլոր տուժանքները վճարվում են ՀՀ դրամով:

11.22 Այն դեպքում, երբ սույն հոդվածով սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պարտավորությունները չխախտող Կողմի կրած փաստացի վնասները ավելի մեծ կլինեն, քան սույն հոդվածի հիման վրա հաշվարկված տուժանքի գումարները, ապա պարտավորությունները չխախտող Կողմն իրավունք կունենա հաշվարկված տույժի և(կամ) տուգանքի գումարների փոխարեն պարտավորությունները խախտող Կողմից պահանջել հատուցելու կրած փաստացի վնասներն ամբողջությամբ:

12. Արժեթղթերի առք ու վաճառք

12.1 Կողմերի իրավասու աշխատակիցները վարում են բանակցություններ և կնքում են Արժեթղթերի առք ու վաճառքի գործարք, համաձայնեցնելով դրա հետևյալ հիմնական/էական պայմանները:

12.2 Պայմանների հիման վրա կնքված Արժեթղթերի առք ու վաճառքի գործարքի համաձայն՝ Կողմերը պարտավոր են իրականացնել փոխադարձ փոխանցումներ/վճարումներ կողմերի միջև համաձայնեցված արժեթղթերով, արժույթով, գումարով, ելնելով համաձայնեցված վավերապայմաններից, որոնք լիովին համապատասխանում են տրամադրված վճարային վավերապայմաններին և սույն Պայմանների 3-րդ կետին:

12.3 Գործարքի կնքման նպատակով Կողմերից մեկը ուղարկում է Գործարքի վավերապայմանները ներառող Առաջարկ համաձայն Հավելված 13-ի:

12.4 Մյուս կողմը ի պատասխան Առաջարկի ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի, եթե Առաջարկում նշված վավերապայմանները համապատասխանում են Կողմերի բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին:

12.5 Եթե Առաջարկում նշված վավերապայմանները չեն համապատասխանում Կողմերի միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնություններին, ապա Առաջարկը ստացած կողմը ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

12.6 Եթե Գործարքները կատարվում են «առաքում վճարման դիմաց» սկզբունքով, ապա Գործարքի կատարման օրը Արժեթղթերը վաճառող Կողմը պարտավոր է մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել Արժեթղթերի վաճառքի հանձնարարական, իսկ Արժեթղթերը գնող Կողմը՝ Արժեթղթերի գնման հանձնարարական:

12.7 Եթե Գործարքները կնքվում են «ազատ առաքման» սկզբունքով, ապա Գործարքի կատարման օրը ռիսկ կրող Կողմը պարտավորվում է մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել Արժեթղթերի ազատ առաքման հանձնարարական՝ որպես Արժեթղթերը վաճառող Կողմ կամ իրականացնել դրամական միջոցների փոխանցում՝ որպես Արժեթղթերը գնող Կողմ, իսկ ռիսկ չկրող Կողմը պարտավորվում է ռիսկ կրող Կողմի համապատասխան փոխանցումների վերաբերյալ ծանուցումները ստանալուց հետո՝ մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը, իրականացնել համապատասխան դրամական միջոցների փոխանցումը՝ որպես Արժեթղթերը գնող Կողմ կամ Պահառուին (Ենթապահառուին) ներկայացնել ազատ առաքման հանձնարարական՝ որպես Արժեթղթերը վաճառող Կողմ: Եթե Կողմերից ոչ մեկը չի հանդիսանում ռիսկ կրող կողմ, ապա Կողմերը պարտավոր են կատարել Արժեթղթերի և դրամական միջոցների համապատասխան փոխանցումները մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամը:

12.8 Եթե Արժեթղթերը գնող Կողմի հայտում նշված դրամական միջոցների հաշիվը վարվում է մյուս Կողմի մոտ, ապա Արժեթղթերը գնող Կողմը Գործարքի կատարման օրը մինչև Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման վերջնաժամկետն ապահովում է Գործարքի գնի փոխանցումը նշված հաշվին, իսկ մյուս Կողմը իրավունք ունի Գործարքի կատարման օրվա ընթացքում անակցեպտ կարգով՝ առանց Արժեթղթերը գնող կողմի լրացուցիչ կարգադրության, Գործարքի գինը գանձել իր մոտ վարվող հայտում նշված Արժեթղթերը գնող Կողմի հաշվից՝ այդ մասին բանավոր տեղեկացնելով մյուս Կողմին: Ընդ որում, եթե Արժեթղթերը գնող Կողմը հանդիսանում է ռիսկ չկրող կողմ, ապա Արժեթղթերը վաճառող Կողմի՝ սույն կետում նշված անակցեպտ գանձնման իրավունքը առաջանում է Արժեթղթերի փոխանցման պարտականությունը կատարելուց հետո: Ընդ որում Արժեթղթերը գնող Կողմի կողմից Առաջարկում և Հաստատման մեջ սահմանված ժամկետում նշված ընդհանուր գնման գնի չափով գումարը իր՝ Արժեթղթերը վաճառող Կողմի կողմից վարվող հաշվին ապահովելը սույն կետի իմաստով համարվում է Արժեթղթերը գնող Կողմի՝ փոխանցման պարտավորության պատշաճ կատարում՝ անկախ Արժեթղթերը վաճառող Կողմի կողմից այդպիսի միջոցների փաստացի գանձման հանգամանքի, պայմանով, որ Արժեթղթեր գնող Կողմը պատշաճ կերպով ապահովել է վերջինիս՝ գումարը անակցեպտ գանձելու հնարավորությունը:

12.9 Եթե Կողմերից որևը մեկը հաշվարկների ռիսկ կրող Կողմ չէ, ապա նա կարող է միակողմանի կարգով հետաձգել իր կողմից կատարվելիք վճարման (փոխանցման) գործառնության օրը մինչև մյուս (հաշվարկների ռիսկը կրող) Կողմի ժամկետանց վճարման (փոխանցման) ենթակա ամբողջ ծավալով գումարի (Արժեթղթերի) ստացման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

12.10 Եթե Կողմերից մեկի դեպո հաշիվները վարվում են որևէ Ենթապահառուի մոտ, ապա տվյալ Կողմը պարտավոր է սույն հոդվածում նշված հանձնարարականները ներկայացնել Ենթապահառուին՝ Պայմանագրով սահմանված ժամերի ընթացքում:

12.11 Եթե Գործարքի պայմաններում այլ պատասխանատվություն չի սահմանված, պարտավորությունները չկատարող կամ ոչ պատշաճ կատարող Կողմը (այդ թվում, բայց չսահմանափակվելով, կատարման (հաշվեգրման) օրը խախտելը, ցանկացած վճարման ժամկետի խախտելը, վճարային վավերապայմանների պահանջները խախտելը և

այլն) պարտավոր է մյուս կողմին վճարել տույժ Գործարքի ընդհանուր գումարի 0.1 %-ի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրացուցային օրվա համար, որը հաշվարկվում է մինչև պարտավորությունների փաստացի կատարումը: Հաշվարկված տույժի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

12.12 Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները, ապա մյուս Կողմը իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց, իսկ պարտավորությունները խախտող Կողմը վճարում է տուգանք Գործարքի ընդհանուր գումարի 5 (հինգ) %-ին համարժեք գումարի չափով, և կողմերը վերադարձնում են տվյալ Գործարքի գծով ստացված գումարները (բացառությամբ՝ 12.11 կետով նախատեսված տույժի և(կամ) տուգանքի), որից հետո գործարքը համարվում է լուծված: Հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առավելագույնը դրա հիմքի առաջացման օրվան հաջորդող օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրը՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

12.13 Սույն հոդվածում նշված հանձնարարականները Կողմերի կողմից պետք է ներկայացվեն, ինչպես նաև փոխանցումները պետք է կատարվեն Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում: Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերից դուրս ներկայացված հանձնարարականները համարվում են ստացված հաջորդ աշխատանքային օրը:

12.14 Սույն հոդվածում նշված հանձնարարականները պետք է ներկայացվեն Պահառուի և (կամ) Ենթապահառուի՝ ներկայացման պահի դրությամբ գործող կանոնների համաձայն:

13. Հաշվանցի իրականացման կարգը

13.1 Հաշվանցով կարող են մարվել Պայմանների 1.2 կետով սահմանված գործարքներից բխողպարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև կնքված գործարքներով:

13.2 Հաշվանցի գործարք կնքելու համար Կողմերից մեկը մյուս Կողմին ներկայացնում է Հաշվանցի Առաջարկ համաձայն Հավելված 14-ի:

13.3 Առաջարկը ստացած Կողմը Առաջարկի պայմաններին համաձայն լինելու դեպքում Առաջարկը ներկայացնող Կողմին ուղարկում է Հաստատում համաձայն Հավելված 15-ի: Առաջարկի պայմաններին համաձայն չլինելու դեպքում ուղարկում է Մերժում համաձայն Հավելված 16-ի:

13.4 Կողմերի միջև Հաշվանցում իրականացնելիս Արժեթղթերի շարժն իրականացվում է Կողմերի՝ Առաջարկում և Հաստատման մեջ նշված դեպո հաշիվներով, իսկ դրամական միջոցների փոխանցումները կատարվում են Կողմերի՝ Առաջարկում և Հաստատման մեջ նշված դրամական հաշիվներով:

13.5 Եթե Կողմերից մեկի դրամական հաշիվները վարվում են մյուս Կողմի մոտ, ապա հաշիվներ վարող Կողմը իրավունք ունի Գործարքի կատարման օրվա ընթացքում անակցեպտ գանձել Առաջարկով և Հաստատումով սահմանված դրամական միջոցները, եթե հանդիսանում է դրամական միջոցների ստացող Կողմ՝ այդ մասին բանավոր տեղեկացնելով մյուս Կողմին, կամ մուտքագրել հաշվանցման Հայտով սահմանված դրամական միջոցները մյուս Կողմի՝ իր մոտ վարվող հաշվեհամարին, եթե հանդիսանում է դրամական միջոցների վճարող Կողմ: Հակառակ դեպքում դրամական միջոցների փոխանցումը Կողմերի կողմից կատարավում է Առաջարկում և Հաստատման մեջ նշված համապատասխան հաշվեհամարներին՝ փոխանցումների կատարման ժամերի ընթացքում:

13.6 Եթե Կողմերից մեկի դեպո հաշիվները վարվում են մյուս Կողմի մոտ, ապա հաշիվներ վարող Կողմը իրավունք ունի Գործարքի կատարման օրվա ընթացքում իր դեպո հաշվեհամարին փոխանցել Առաջարկով և Հաստատման մեջ նշված Արժեթղթերը, եթե հանդիսանում է Արժեթղթերի ստացող Կողմ՝ այդ մասին բանավոր տեղեկացնելով մյուս Կողմին, կամ մուտքագրել Առաջարկով և Հաստատման մեջ նշված Արժեթղթերը մյուս կողմի իր մոտ վարվող հաշվեհամարին, եթե հանդիսանում է Արժեթղթերի վճարող Կողմ: Եթե Կողմերից մեկի դեպո հաշիվները վարվում են որևէ Ենթապահառուի մոտ, ապա տվյալ Կողմը պարտավոր է Առաջարկում և Հաստատման մեջ նշված Արժեթղթերի

փոխանցումն իրականացնել Առաջարկում և Հաստատման մեջ նշված համապատասխան հաշվեհամարներին փոխանցումների կատարման ժամերի ընթացքում:

13.7 Սույն հոդվածում նշված հանձնարարականները Կողմերի կողմից պետք է ներկայացվեն, ինչպես նաև փոխանցումները պետք է կատարվեն Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերի ընթացքում: Առաջարկում և Հաստատման մեջ նշված փոխանցումների կատարման ժամերից դուրս ներկայացված հանձնարարականները համարվում են ուշացմամբ ուղարկված (ստացված հաջորդ Աշխատանքային օրը):

13.8 Հաշվանցի կատարման օրը Առաջարկի և Հաստատմանը համապատասխան Արժեթղթերը սահմանված ժամկետներում Գնորդի դեպո հաշվին չապահովելու դեպքում պարտավորություն չկատարող կողմը վճարում է տուժանք՝ հայտում նշված Գործարքի գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, ընդ որում Առաջարկը և Հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

13.9 Հաշվանցի կատարման օրը Գործարքին համապատասխան դրամական միջոցները Ստացող կողմի դրամական հաշվին չապահովելու դեպքում պարտավորություն չկատարած կողմը վճարում է տուժանք Գործարքի գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, ընդ որում Առաջարկը և Հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

13.10 Սույն հոդվածով նախատեսված տուժանքների վճարումները (փոխանցումները) պետք է կատարվեն դրանց հիմքի առաջացման հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց այդ մասին լրացուցիչ պահանջ ներկայացնելու:

13.11 Բոլոր տուժանքները վճարվում են ՀՀ դրամով:

13.12 Այն դեպքում, երբ սույն հոդվածով սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պարտավորությունները չխախտող Կողմի կրած փաստացի վնասները ավելի մեծ կլինեն, քան սույն հոդվածի հիման վրա հաշվարկված տուժանքի գումարները, ապա պարտավորությունները չխախտող Կողմն իրավունք կունենա հաշվարկված տույժի և(կամ) տուգանքի գումարների փոխարեն պարտավորությունները խախտող Կողմից պահանջել հատուցելու կրած փաստացի վնասներն ամբողջությամբ:

14. Գործողության ժամկետը և փոփոխությունները

14.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի երկկողմանի ստորագրման պահից Պայմանների 3.1 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացված լինելու դեպքում և գործում է անժամկետ:

14.2 Պայմանագիրը կարող է լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին 30 օրացուցային օր առաջ գրավոր եղանակով տեղեկացնելու պայմանով:

14.3 Պայմանագիրը կարող է դադարել ՀՀ օրենսդրությամբ և Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով:

14.4 Կողմերից մեկի սնանկ ճանաչվելու պահից Պայմանագիրը համարվում է դադարած:

14.5 Պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերի՝ Պայմանագրի շրջանակներում կնքված գործարքներով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման՝ տվյալ պարտավորության կատարման համար սահմանված ժամկետում, եթե ՀՀ օրենսդրությամբ կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան չի սահմանվում: Ընդ որում, այդպիսի պարտավորությունների մասով Պայմանագրի գործողությունը շարունակվում է մինչև դրանց ամբողջական և պատշաճ կատարումը:

14.6 Պայմանագիրը կարող է փոփոխվել և (կամ) լրացվել Կողմերի համաձայնությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, բացառությամբ Պայմանների 14.8 կետում նշված փոփոխությունների և Պայմաններով նախատեսված այլ դեպքերի, երբ փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են միակողմանի՝ մյուս կողմին տեղեկացնելու պայմանով:

14.7 Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել սույն Պայմանները՝ այդ մասին 7 (յոթ) օր առաջ տեղեկացնելով Գործընկերոջը Պայմանագրով սահմանված կապի միջոցով:

14.8 Կողմերը պարտավորվում են 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով միմյանց տեղեկացնել Պայմանների 3.1-3.5 կետերում նշված փաստաթղթերի, տվյալների, այդ թվում՝ Կողմերի հասցեների, վճարային վավերապայմանների, հեռախոսի, ֆաքսի և այլ վավերապայմանների փոփոխությունների մասին, որոնք ապահովում

են Պայմաններով սահմանված դրույթների կատարումը: Հակառակ դեպքում Կողմերի միջև սույն Պայմաններից բխող թղթակցությունները, հաստատումները, գրագրությունները, վճարումները և սույն Պայմաններով սահմանված դրույթների կատարումն ապահովող այլ գործողություններն իրականացվում են Կողմերի կողմից սույն Պայմաններում նշված հասցեներով, տվյալներով և վավերապայմաններով: Փոփոխությունների մասին մյուս Կողմին չիրազեկելու հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող Կողմը:

14.9 Պայմանների 3.1-3.5 կետերում նշված փաստաթղթերը/տվյալները փոխանակվում կամ տրամադրվում, իսկ դրանց փոփոխությունների մասին Կողմերը ծանուցվում են Պայմանագրով սահմանված կապի միջոցով.

14.9.1 թղթային եղանակով (երկու օրինակից)՝ իրավասու անձի ստորագրությամբ ու վավերացված համապատասխան Կողմի կնիքով (եթե կիրառելի է),

14.9.2 էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ միջոցներով. էլեկտրոնային փոստ, CBANet համակարգչային ցանց (էլեկտրոնային ստորագրությամբ (Delivery option/ sign) և ծածկագրումով (Delivery option/ Encrypt)), SWIFT և(կամ) այլ:

14.10 Այն դեպքում, երբ Պայմանների մեկ կամ մի քանի դրույթներ Կողմերի կամքից անկախ ամբողջովին կամ մասնակի կերպով դառնան չգործող կամ ճանաչվեն իրավաբանական ուժը կորցրած, դրա մյուս դրույթները մնում են ուժի մեջ:

15. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

15.1 Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրությանը և Պայմաններին համապատասխան:

15.2 Պայմաններով սահմանված տույժի/տուգանքի վճարումը չի ազատում խախտում կատարած Կողմին Պայմաններով նախատեսված և դրա հիման վրա կնքված Գործարքներով պարտավորությունների բարեխիղճ և պատշաճ կատարումից:

15.3 Այն դեպքում, երբ Գործարքով պարտքի մարման համար փոխանցված գումարը բավական չէ տվյալ Գործարքով պարտքի լիարժեք մարման համար, սահմանվում է պարտքի մարման հետևյալ հերթականությունը, եթե կոնկրետ գործարքով այլ հերթականություն սահմանված չէ՝

- Տույժ/տուգանք,
- հաշվեգրված տոկոսներ, միջնորդավճար,
- Գործարքի գումարը,
- Վճարման ենթակա այլ գումարներ:

15.4 Եթե պարտավոր Կողմը սույն բաժնով սահմանված տույժը և(կամ) տուգանքը չի վճարում սահմանված ժամկետներում, մյուս Կողմը իրավունք է ձեռք բերում համապատասխան տույժի և(կամ) տուգանքի գումարներն անակցեպտ կարգով՝ առանց լրացուցիչ կարգադրության, գանձել պարտավոր Կողմի իր մոտ վարվող հաշիվներից: Ընդ որում, գանձումը կատարվում է ՀՀ դրամով վարվող հաշվից, իսկ ՀՀ դրամով հաշվի բացակայության կամ միջոցների անբավարարության դեպքում պակասող գումարը գանձվում է այլ արժույթով վարվող հաշիվներից՝ կատարելով փոխարկում տվյալ պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքով:

15.5 Մի Կողմը պատասխանատվություն է կրում միայն սույն Պայմանների շրջանակներում իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում մյուս Կողմին պատճառված իրական վնասի համար:

15.6 Սույն Պայմանների հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բանակցությունների՝ Կողմերի համար ընդունելի արդյունք չգրանցվելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատարանի միջոցով:

16. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

16.1 Կողմերը Պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ազատվում են պատասխանատվությունից, եթե դա հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա անհաղթահարելի ուժի ազդեցության:
16.2 Սույն կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն Պայմաններով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից, տեխնիկական սարքերի անսարքությունը և այլ հանգամանքներ, որոնք սույն Պայմանների դրույթները խախտող կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:
16.3 Եթե Պայմանագրից բխող պարտավորությունների կատարումն անհնար է դառնում վերոնշյալ հանգամանքների պատճառով, Կողմերը պարտավոր են դրանց առաջացման և դադարեցման պահից միմյանց ուղարկել գրավոր տեղեկություն 3 աշխատանքային օրվա ընթացքում: Այդ դեպքում Պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է նման անհաղթահարելի ուժի ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) օրացուցային ամսից ավելի, ապա Կողմերի գրավոր համաձայնությամբ Պայմանագիրը կարող է լուծվել:

17. Այլ դրույթներ

17.1 Սույն Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:
17.2 Պայմանների շրջանակներում հայտնի դարձած տեղեկությունները գաղտնի են և Կողմերի կողմից ենթակա չեն հրապարակման, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
17.3 Պայմանները պարտադիր են ինչպես Կողմերի, այնպես էլ նրանց իրավահաջորդների համար:
17.4 Պայմանների հավելվածները հանդիսանում են Պայմանների անբաժանելի մաս:
17.5 Կողմերից ոչ մեկն իրավասու չէ փոխանցել Պայմաններով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները երրորդ կողմի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության: